

ADA – Ծանուցում Համաձայն Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտի

Ապահովագրեր և Ընթացակարգեր

Ծանուցում համաձայն Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտի

Համաձայն 1990թ. Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտի («ADA») բաժին II-ի պահանջների, Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունը հաշմանդամության հիման վրա չի ցուցաբերի իր ծառայությունների, ծրագրերի կամ գործունեության խտրականություն, ընդդեմ հաշմանդամություն ունեցող սահմանափակ անհատների:

Արդյունավետ Հաղորդակցություն. Խնդրելու դեպքում Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունը հաշմանդամություն ունեցող որակավորված անձանց կտրամադրի համապատասխան օգնություններ և ծառայություններ, որոնք կհանգեցնեն արդյունավետ հաղորդակցության, որպեսզի նրանք կարողանան հավասար մասնակցել Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչության ծրագրերին, ծառայություններին և գործունեություններին, այդ թվում՝ որակյալ նշանների լեզվի մեկնաբաններ, խոշոր տպագիր փաստաթղթեր և այլ ուղիներ տեղեկատվությունը և հաղորդակցությունը մատչելի դարձնելու այն մարդկանց, ովքեր ունեն խոսքի, լսողության կամ տեսողության խանգարումներ:

Ապահովագրերի և Ընթացակարգերի Փոփոխություններ. Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունը կանի ապահովագրերի և ծրագրերի բոլոր խելամիտ փոփոխությունները, վստահ լինելու համար, որ հաշմանդամություն ունեցող անձինք ունենան հավասար հնարավորություն վայելելու բոլոր իրենց ծրագրերը, ծառայությունները և գործունեությունները: Օրինակ՝ կենդանիների ծառայություններից օգտվող անձինք կարող են այցելել Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչության գրասենյակները, նույնիսկ, որտեղ կենդանիների մուտքն ընդհանուր առմամբ արգելված է:

Յուրաքանչյուրն, ով արդյունավետ հաղորդակցության նպատակով պահանջում է օժանդակ օգնություն կամ ծառայություն կամ Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչության ապահովագրերի կամ ընթացակարգերի փոփոխում՝ ծրագրին, ծառայությանը կամ գործունեությանը մասնակցելու համար, պետք է որքան հնարավոր է արագ, նախատեսված իրադարձությունից ոչ ուշ, քան 48 ժամ առաջ, դիմի ADA թեժ գծին՝ (844) 586-5550 հեռախոսահամարով:

ADA-ը չի պահանջում, որ Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունը ձեռնարկի որևէ գործողություն, որը կարող է արմատապես փոխել իր ծրագրերի կամ ծառայությունների բնույթը կամ պարտադրել անհարկի ֆինանսական կամ վարչական բեռ:

Բողոքները, որոնք վերաբերվում են նրան, որ Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչության ծրագիրը, ծառայությունը կամ գործունեությունը հասանելի չէ հաշմանդամություն ունեցող անձանց, պետք է ուղղվեն ADA թեժ գծին՝ (844) 586-5550 հեռախոսահամարով:

Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունը չի դնի հավելավճար ծածկելու համար ծախսերը՝ հաշմանդամություն ունեցող կոնկրետ անհատի կամ հաշմանդամություն ունեցող ցանկացած խմբի, օժանդակ օգնությունների/ծառայությունների կամ ապահովագրի ողջամիտ փոփոխությունների համար, ինչպիսիք են՝ իրերի հեռացնելը վայրերից, որոնք բաց են հանրության համար, սակայն անցանելի չեն այն անձանց համար, ովքեր օգտագործում են անվասայլակներ:

Բողոքների Կարգը

Այս Բողոքների Կարգը ստեղծվել է 1990թ. Հաշմանդամություն Ունեցող Ամերիկացիների Ակտի («ADA») պահանջները բավարարելու համար: Այն կարող է օգտագործվել, ցանկացած անձի կողմից, ով ցանկանում է ներկայացնել զանգատ խտրականության հիման վրա, փաստարկելով Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչության ծառայությունները, գործունեությանը, ծրագրերը կամ նպաստները: Մարզի անձնակազմի ապահովագիրը ղեկավարում է աշխատանքի հետ կապված հաշմանդամության խտրականության բողոքները:

Բողոքը պետք է պարունակի ենթադրյալ խտրականության մասին տեղեկատվություն, ինչպիսին է՝ անունը, հասցեն, հայցվորի հեռախոսահամարը և գտնվելու վայրը, ամսաթիվը և խնդրի նկարագրությունը: Բողոքարկումների այլընտրանքային միջոցները, ինչպիսիք են անհատական հարցազրույցները կամ բողոքի ժապավենային ձայնագրությունը, խնդրելու դեպքում հասանելի կլինեն հաշմանդամություն ունեցող անձանց:

Բողոքը պետք է ներկայացվի բողոքարկողի և/կամ նրա ներկայացուցչի կողմից, որքան հնարավոր է արագ, բայց ոչ ուշ, քան ենթադրյալ խախտման օրից հետո 180 օրացուցային օրվա ընթացքում:

Civil Rights Section
12860 Crossroads Parkway South
City of Industry, CA 91746

Քաղաքացիական իրավունքների բաժնի ստացած բոլոր գրավոր բողոքները, զանգատները Հաշմանդամության քաղաքացիական իրավունքների գործադիր գրասենյակին և այդ երկու գրասենյակների պատասխանները առնվազն երեք տարի կպահպանվեն Հանրային Սոցիալական Ծառայությունների Վարչությունում: